ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ»
փակ բաժնետիրական ընկերություն

Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, 0910, ք. Մեծամոր, հեռ./ֆաքս - (37410) 28 06 69, (37410) 28 85 80, կապի օպերատոր - (37410) 73 98 30, էլ.փոստ - anpp@anpp.am, anpp@haek.am

№ E/13/1376-22 առ "20" 06 2022թ.

Ձեր №_____ առ "_____" _____ _ 2022թ.

«Ալեքսան Միքաելյան Դավիդի» ԱՁ
E-mail:
Eloyanvaruzhan2020@gmail.com

[Ծանուցում №ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-63/22-01/132 պայմանագրի միակողմանի լուծման վերաբերյալ]

Հարգելի պարոն Միքաելյան,

«Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ «ՀԱԷԿ» ՓԲԸ) կարիքների համար համակարգչային տեխնիկաների, պատճենահանման սարքավորումների օժանդակ նյութերի ձեռք բերման նպատակով «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի և «Ալեքսան Միքաելյան Դավիդի» ԱՁ-ի միջև 2022թ. ապրիլի 28-ին կնքվել է թիվ ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-63/22-01/132 պայմանագիրը, որի արդյունքում Ձեր կազմակերպությունը պարտավորվել է պայմանագրով սահմանված ժամկետում մատակարարել՝ 3-րդ չ/բ 1215 մետր մալուխ 364500 (երեք հարյուր վաթսունչորս հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ ընդհանուր արժեքով, սակայն չի մատակարարվել:

Համաձայն վերոհիշյալ Պայմանագրի

- 2.4.1 կետի «Վաճառողը պարտավոր է Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով»:
- 2.4.2 կետի «Վաճառողը պարտավոր է ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում»:
- 2.4.4 կետի «Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով»:
- Հավելված N1-ի Վաճառողը պարտավոր է մատակարարումը իրականացնել Պայմանագրի կնքման օրվանից 30 օրացուցային օրում:

Հիմք ընդունելով հիշյալ պայմանագրի 2.1 կետը, այն է՝ գնորդը իրավունք ունի՝

- 2.1.1 ապրանքը սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրացուցային օրից ավելի:
- 2.1.7 միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե էականորեն խախտվել է պայմանագիրը:
- 2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտվել էական է համարվում, եթե՝

  բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրացուցային օրից ավելի:

Տեղեկացնում ենք Ձեզ, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն միակողմանի լուծում է «Ալեքսան Միքաելյան Դավիդի» ԱՁ-ի հետ 2022թ. ապրիլի 28-ին կնքած թիվ ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-63/22-01/132 պայմանագիրը:

Հայտնում ենք նաև, որ չմատակարարված ապրանքի մասով Ձեր կազմակերպության նկատմամբ կկիրառվեն նաև պայմանագրի 6-րդ կետով սահմանված տույժը և տուգանքը:

Գլխավոր տնօրենի տեղակալ-
ընդհանուր հարցերի գծով տնօրեն՝ **Ս.Մաթևոսյան**

Կազմեց՝ Վ. Մանուկյան
ԳԲ 2-րդ կարգի մասնագետ
+374 10 28 29 60